

*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերոլոգաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՏԵԼԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2023


Նույեմբերի երկրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոոդերոլոգաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերոլոգաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Նոյեմբերի երկրորդ տասնօրյակում հանրապետությունում օդի միջին ջերմաստիճանը եղել է նորմայից բարձր 4-6աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են նոյեմբերի 13-ին. Տափուշում գրանցվել է +21...+23°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +14...+16°C, նախալեռնային շրջաններում՝ +21...+23°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +25...+27°C, նախալեռնային շրջաններում՝ +19...+23°C, Շիրակում՝ +14...+19°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +13...+16°C, նախալեռնային շրջաններում՝ +17...+19°C, Գեղարքունիքում՝ +13...+18°C, Լոռիում՝ +19...+23°C, Արմավիրում՝ +20...+22°C, Արարատում՝ +20...+22°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +14...+16°C, նախալեռնային շրջաններում՝ +16...+22°C:


Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են նոյեմբերի 11-ին և 18-ին. Տափուշում գրանցվել է -1...+4°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 0...-2°C, նախալեռնային շրջաններում՝ +3...+5°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +3...+7°C, նախալեռնային շրջաններում՝ -2...+3°C, Շիրակում՝ 0...-2°C (Աշոցք՝ -7°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ -3...+1°C, նախալեռնային շրջաններում՝ +1...+3°C, Գեղարքունիքում՝ -3...+2°C, Լոռիում՝ 0...-3°C (Տաշիր՝ -6°C), Արմավիրում՝ +1...+3°C, Արարատում՝ +3...+5°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ -2...-4°C, նախալեռնային շրջաններում՝ +3...+5°C:

Տասնօրյակային տեղումներ




Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը շիրակում կազմել է 16-25մմ (162-304%) Լոռիում՝ 5-16մմ (74-179%), Տավուշում՝ 6-16մմ (69-200%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 18-35մմ (200-402%), նախալեռներում՝ 11-13մմ (203-208%), Գեղարքունիքում՝ 3-14մմ (68-211%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 18-25մմ (155-227%), նախալեռներում՝ 9մմ (106%), Արմավիրում՝ 6-15մմ (136-283%), Արարատում՝ 8-17մմ (171-415%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 40մմ (245%), նախալեռներում՝ 15մմ (375%), Սյունիքում՝ 1-5մմ (14-75%):

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Նոյեմբերի երկրորդ փասնօրյակում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները լեռնային և առանձին նախալեռնային շրջաններում գրանցվել են $-2...-6^{\circ}\text{C}$, Արարատյան դաշտում, Տավուշի հովտային շրջաններում, Արագածոտնի, Վայոց ձորի նախալեռներում և Սյունիքի հովտային շրջաններում՝ $-2...+2^{\circ}\text{C}$:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ





Գյուղատնտեսական մշակաբույսեր

Տասնօրյակի ընթացքում բույսերի աճ տեղի է ունենցել միայն ցերեկային ժամերին, աշնանացան ցորենի վեգետացիան ամենուրեք շարունակվել է:

Առանձին շրջաններում (Գյումրի, Ստեփանավան, Արարատ, Ուրցաձոր) աշնանացանը թփակալել է, մնացած շրջաններում այն գտնվել է երրորդ տերևի առաջացման փուլում:

Մերձավանում աշնանացանի աճի և զարգացման համար կարևոր գործոն հանդիսացող հողի խոնավության պաշարները 0-10սմ-ում կազմել են 15մմ, 0-20սմ շերտում՝ 34մմ, որն անցյալ տասնօրյակի համեմատ նվազել էր 4-9մմ-ով:

Աշնանացանի բարձրությունը տասնօրյակի վերջին կազմել է 10-22սմ:

: